«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022 ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ << Շրջված դասարան>> և << Խմբային աշխատանք >> մեթոդների կիրառման արդյունավետությունը << Հայոց Մեծ եղեռնը>> թեմայի դասավանդմա ժամանակ

ԱՌԱՐԿԱ Հայոց Պատմություն

ԿԱՏԱՐՈՂ Վարդուհի Հարությունյան

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ Նաիրա Մարտիրոսյա

ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

《ԳԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ》 ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն ---------- **- 3**

Գլուխ 1

Հայոց Մեծ Եղեռնի պատճառները---------- **- 4**

Գլուխ 2

Ցեղասպանության իրականացումն ու դրա հետևանքները---------- **6**

Փորձարարական դաս1.---------- **14**

Թեմայի ուսուցումը << Շրջված դասարան >> մոդելով ՏՀՏ կիրառմամբ

Փորձարարական դաս 2 ---------- **19**

Թեմայի ուսուցումը խմբային աշխատանքի կամ համագործակցային ուսուցման միջոցով

Եզրակացություն---------- **22**

Օգտագործված գրականության ցանկ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի դարավոր պատմությունը ունի ոչ քիչ ողբերգական էջեր: Սակայն այդ ողբերգական դրվագներից ամենացնցողը 1915թ. համաժողովրդական աղետն է:Այդ հանցագործ քաղաքականության բարձրակետը հանդիսացավ 1915-1916թթ. Մեծ Եղեռնը, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Ցեղասպանությունը մեր ժողովրդին պատճառեց մարդկային, տարածքային ու մշակութային անդարմանելի կորուստներ, սոցիալական ու հոգեբանական խոր ազդեցություն գործեց հայ ժողովրդի կյանքի ամենատարբեր բնագավառների վրա: Թեման ընտրել եմ , քանի որ այն խիստ արդիական է , << Հայկական հարց>>-ը շարունակում է մնալ առկախված : Արյունարբու Աբդուլ Համիդ սուլթանին, երիտթուրք պարագլուխներին և աթաթուրք Քեմալին եկել է փոխարինելու նոր արյունարբու <<սուլթան Էրդողանը >> , որի համար << հայկական սեպ >> են Արցախն ու Զանգեզուրը : Եվ քանի դեռ չի իրագործվել պանթուրքիզմի գաղափարախոսությունը, կա և գոյություն կունենա պանթուրքիզմը՝ իր վտանգներով: Սա անվիճելի իրողություն է: Ուստի պետք է դասեր քաղել պատմությունից և ամուր կանգնել պետականության և անկախության դիրքերում :

8-րդ դասարանում << Հայոց պատմության >> դասին օգտագործել եմ << Համագործակցային ուսուցում >> և << Շրջված դասարան >> ՏՀՏ կիրառմամբ մեթոդները , որոնց արդյունավետությունը ներկայացրել եմ փորձարարական երկու դասերի վերաբերյալ վերլուծություններում : Աշխատանքը կազմված է ներածությունից , երկու գլուխներից , փորձարարական 2 դասերից , եզրակացությունից և օգտագործված գրականությա ցանկից : Աշխատանքի համար հիմք են ծառայել ինչպես թեմային առնչվող պատմագիտական, աղբյուրագիտական , մեթոդամանկավարժական գրականությունը , այնպես էլ համացանցային հավաստի աղբյուրները: Տեքստը շարադրվել է նշված նյութերի համադրման, ընդհանրացման և քննական վերլուծության միջոցով:

Գլուխ 1
Հայոց Մեծ Եղեռնի պատճառները

Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքերի կառավարությունը նախապատրաստեց ու իրականացրեց հայերի զանգվածային տեղահանությունն ու ոչնչացումը: Դա հայոց ցեղասպանության բարձրակետն էր, որի հետևանքով թուրքերը հասան տասնամյակներ շարունակ հետապնդած իրենց գլխավոր նպատակին՝ ամբողջությամբ հայազրկեցին Արևմտյան Հայաստանը:

Հայոց ցեղասպանությունը թուրքերի ազգային-պետական քաղաքականության հիմքում էր դրված տասնամյակներ շարունակ: Դրա վառ վկայությունն է 1915թ. օգոստոսի 31-ին Թալեաթի արած խոստովանությունը՝ <<Հայկական խնդիրը լուծելու տեսակետով՝ երեք ամսվա մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը երեսուն տարվա մեջ>>[1]: Հայկական ջարդերի կազմակերպիչներից մեկը՝ դոկտոր Բեհաեդին Շաքիրը, Բաթումի կոնֆերանսում հայտարարեց. <<Հայերը մեր պանիսլամական ու պանթուրքական սրբազան գաղափարների ճանապարհին են կանգնել, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ: Դա բարձր է, դուրս է մեր անձնական զգացմունքներից ու տրամադրություններից: Մենք ստիպված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնել այն ամենը, ինչ որ արգելք է հանդիսանում մեր սրբազան ազգային իդեալներն ի կատար ածելու համա>> :

Մեծ Թուրանի ստեղծումը պետք է իրագործվեր երեք փուլերով.

1.Թուրքիզմ. Այն ենթադրում էր, թուրքացնել օսմանյան կայսրությունը: Քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում հայերը կամ պիտի ձուլվեին կամ ոչնչացվեին: Թուրքացման քաղաքակրթության հայրը << մեծագույն հրեշներից մեկն էր՝ <<Կարմիր սուլթանը>>, որը կայսրության <<փոքրանալու>>, դրա անկման վտանգի պատճառը համարում էր հպատակ ժողովուրդների խնդիրներով մեծ տերությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին: [2]2. Օղուզական պետության ստեղծում. Նոր ստեղծած պետությունը՝

1.Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920թվականներին , Երևան 2003թ., էջ 56

2.Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն , հատոր II, Երևան 2002թ., , էջ 18 :

Օղուզս¬տանը, իր մեջ պետք է ընդգրկեր Օսմանյան Թուրքիան, ռուսական և պարսկական Ադրբեջանները, Թուրքմենստանը: Այս փուլում փաստորեն նվաճվելու էր նաև Արևելյան Հայաստանը և ոչնչացվելու էր արևելահայությունը:

3. Պանթուրքիզմ. Այս փուլում պետք է ստեղծվեր միացյալ Թուրան պետությունը: Մեծ Թուրանն իր մեջ պետք է միավորեր թուրքալեզու բոլոր ժողովուրդներին: Այսպիսով՝ պանթուրքիզմը հայերին երրորդ ճանապարհ չէր թողնում[3]: Հայ ժողովուրդն իր երկու հատվածներով կա՛մ պետք է ոչնչանար, կա՛մ թուրքանար:

Եվ, վերջապես, ցեղասպանության պատճառների շարքում որոշակի դեր է խաղացել տնտեսական գործոնը: Քանի որ թուրք ժողովրդի համար կյանքի հիմնախնդիրը գործ չանելն էր, հանգստանալը, նրանց համար կատարյալ էր այն հանգիստը, երբ լրիվ բացառվում էր թե՛ ֆիզիկական, և թե՛ մտավոր աշխատանքը, բացառությամբ ծխելուց և սուրճ խմելուց ու այն իրողության գիտակցումից, որ գտնվում է լիակատար անբան վիճակում: Թուրքը տգետ էր, կոպիտ, պարծենկոտ ու գերի նախապաշարումներին: Նախախնամությունը թուրքին զրկել էր <<արարելու

կարողությունից ու ճաշակից>>: Թուրքի համար բնութագրական էր Օսմանի խոսքերը՝ ասված Ալեքսանդրիայի գրադարանը հրկիզելու ժամանակ.<<Եթե դրանցում գրվածները Կուրանում չկան՝ վնասակար են, իսկ եթե կան՝ ավելորդ են>>[4]: Ամբողջ կայսրության բնակչության ընդհանուր թվի միայն երրորդ մասն էին կազմում թուրքերը: Թուրքական տիրապետությունը բռնակալական միջոցներով շարունակում էր իր տիրապետությունն իրականացնել սլավոնների ու հայերի, արաբների ու քրդերի և այլ ժողովուրդների վրա[5]: Կառավարությունը և նրա տեղական օրգանները ոչ միայն չէին պայքարում բացահայտ անօրինակությունների և անարդարությունների դեմ, այլև հաճախ իրենք էին հրահրում այդպիսի երևույթները[6]:

---

3. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը:Բովանդակությունը , ծագումը հիմնական փուլերը, Երևան 1995թ., էջ 35:

4. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն , հատոր II, Երևան 2002թ., , էջ 12 :

5.Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը , Երևան 1967թ., էջ 29 :

6. Նշված աշխ. , էւ 33:

Գլուխ 2
Ցեղասպանության իրականացումն ու դրա հետևանքները

1910-1911թթ. Սալոնիկում տեղի ունեցած ընդհանուր ժողովների ժամանակ իթթիհատականները որդեգրեցին պանթուրքիզմի քաղաքականությունը: Կայսրության մահմեդական ժողովուրդները պետք է թուրքացվեին, իսկ քրիստոնյաները՝ ոչնչացվեին: Ապա Թուրքիային էին միացվելու Իրանական Ադրբեջանը, Կովկասը, Ղրիմը, Թաթարստանը, Միջին Ասիան, Սիբիրը, Թուրքմենստանը, Մանջուրիան և ստեղծվելու էր մեծ Թուրանը: Բազմաթիվ թուրքական աղբյուրներ վկայում են, որ արևմտահայ ժողովրդի զանգվածային կոտորածի պլանները թուրքական կառավարողները ծրագրել էին բալկանյան պատերազմից անմիջապես հետո:

Այս ծրագրի իրականացման ճանապարհին էր գտնվում Հայաստանը, և հայ ժողովուրդը դարձավ դրա առաջին զոհը: Թուրք բնակչության մեջ սկսեցին հրահրել ամենավայրենի շովինիզմ ու հայատյացություն, կոչ էին անում՝ քանի դեռ ուշ չէ, թուրքացնել Անատոլիան, իսկ հայերին ոչնչացնել:

Պատերազմի սկզբին ստեղծվեց մի այլ մարմին, որի խնդիրը հայերի ահաբեկումն էր: Երիտթուրքերը իրենց գաղտնի խորհրդակցությունում միաձայն որոշում ընդունեցին ամբողջ հայությանը ոչնչացնելու մասին: Այդ ծրագրի իրականացման կոնկրետ միջոցառումներ մշակելու համար ստեղծվեց Երեքի գործադիր մարմին, որի անդամներն էին դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, դոկտոր Նազըմը և կրթական նախարար Միդհատ Շյուքրին: Բեհաէդդին Շաքիրի առաջարկությամբ Եռյակ կոմիտեն ստեղծեց հայերի բնաջնջման հատուկ կազմակերպություն՝ Թեշքիլաթը մախսուսե, որի գլուխ կանգնած էր Թալեաթը, տեղակալն էր Տիգրանակերտի կուսակալ Ռեշիդ բեյը: Հայերի բնաջնջման համար պետք է օգտագործվեին ինչպես զորքն ու ժանդարմերիան, այնպես էլ բանտերից ազատված արյունարբու մարդասպաններից կազմված հրոսակախմբերը, քրդական ավազակախմբերը, չեթեները, մահմեդական ֆանատիկ խուժանը, որոնց թիվը հասավ 10000-ի[7]: Կազմակերպությունը իր ճյուղերն ստեղծեց Թուրքիայի ողջ տարածքում:Հատուկ կազմակերպության վարչական մարմինը մշակեց հայերի բնաջնջման հետևյալ հիմնական ծրագիրը.

7. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թվականներին, Երևան , 2003թ., էջ 59 :

1. Թուրքական բանակ զորակոչված հայ զինվորների ոչնչացում,
2. Թիկունքի ողջ հայ բնակչության զինաթափում,
3. Հայ մտավորականության ձերբակալում, աքսոր և ոչնչացում,
4. Բոլոր հայերի բռնագաղթ դեպի Միջագետքի անապատները և նրանց ան-խնա բնաջնջում:

Որոշվեցին նաև հայերի տեղահանման ու ոչնչացման ժամկետներն ըստ վիլայեթների, սանջակների, քաղաքաների ու գյուղերի[8]:

Այսպիսով՝ երիտթուրքական պարագլուխները համաշխարհային պատերազմը հարմար առիթ համարելով՝ սկսեցին իրենց կանխամտածված ծրագրի իրականացումը: Հայերի ցեղասպանության ծրագրի գործադրությունը սկսվեց Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու առաջին օրերից[9]: Պատերազմի սկզբում զորակոչվեց շուրջ 50 հազար հայեր, որոնք գտնվում էին դժոխային պայմաններում: Նրանք սնվում և հագնվում էին շատ վատ, ենթարկվում թուրք զինվորների

ծաղրուծանակին ու կամայականություններին … Չնայած այդ ամենին՝ արևմտահայ զինվորներն ու սպաները բարեխղճորեն կատարում էին իրենց քաղաքացիական պարտքը և ամեն կերպ աշխատում էին խուսափել անցանկալի միջադեպներից:

Է1915թ. փետրվարի 27-ին հրաման արձակեցին զորամասերի հրամանատարներին՝

1. Կայսերական բանակում ծառայող բոլոր հայերին առանձնացնել իրենց զո¬րաբաժիններից և աչքից հեռու վայրերում գնդակահարել,
2. Հայ սպաներին իրենց զորախմբերի բնակատեղերում բանտարկել և սպասել նոր ցուցումի,
3. Կատարման մասին զեկույցներ կայացնել 48 ժամվա ընթացքում:

Այս հրամանի հիման վրա 1915թվականի գարնանը թուրքական բանակի հայզինվորականները զինաթափվեցին ու առանձնացվեցին բացառապես բանվորական, աշխատանքային գումարտակների: Ընդհանուր առմամբ

կազմվեցին 120 այդպիսի գումարտակներ: Այդ տաժանակիր աշխատանքները կատարելուց հետո հայ զինվորները դավադրաբար սպանվեցին զանազան գաղտնի վայրերում:

---

8. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թվականներին, Երևան , 2003թ էջ 60 :

9. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու », Ներսիսյան Մ., խմբ. , էջ 114 :

Այսպիսով՝ արևմտահայության բնաջնջման առաջին մեծ գործողությունը թուրքական բանակի հայ զինվորների ոչնչացումն էր: Բացահայտ կեղծիք է այդ տմարդի արարքը հայերի դասալքությամբ հիմնավորելու թուրքական վարկածը, քանի որ թուրք և քուրդ դասալիքների թիվը մի քանի անգամ գերազանցում էր հայ դասալիքների թվից, իսկ վերջիններս էլ, եթե դասալքում էին, ապա այդ քայլին դիմում էին բանակում նրանց համար ստեղծված անտանելի պայմաններից դրդված:

Հայ մեծանուն բանաստեղծ Սիամանթոն իր վերջին նամակներից մեկում, որ նա գրել էր 1914թ. սեպտեմբերի 5-ին Կ. Պոլսից, անդրադառնալով թուրքական բանակում հայ զինվորների վիճակի հարցին, նշել է.<<Իմ եղբայրս, որ միակ դրամ շահողն է մեր տանը մեջ, առին և տարին: Ահավոր բան կը գրե: Օրը կես սոման հաց կուտան. կը պառկին վրաններու տակ և ցեխին մեջ. հագուստ չունին. զինվոր են և զենք չունին, կը խմեն ցեխի ջուր:… Հաց կհուսան, չեն ստանար և չեն ըմբոստանար>>: Թուրք բժիշկները հրաժարվում էին օգնություն ցույց տալ վիրավոր կամ հիվանդ հայ զինվորներին[10]:

Փաստորեն, այսպես երիտթուրքերը հայերին զրկում էին պաշտպանվելու հնարավորությունից: Մեծ եղեռնի երկրորդ խոշոր գործողությունը արևմտահայ մտավորականության ձերբակալությունը, աքսորն ու գազանաբարո ոչնչացումն էր: Դրա նպատակը արևմտահայության գլխատումը, նրան ուղղություն տվող, ղեկավարող ուժից զրկելն էր: Ամենածանր հարվածը հասցվեց Պոլսին, ուր կենտրոնացված էր հայ մտավորականության ընտրանին՝ գրողներ, արվես-տագետներ, գիտնականներ, բժիշկներ, մանկավարժներ, լրագրողներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Այս գործողությունները ղեկավարում էր Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյը: Նախօրոք կազմվեց սև ցուցակներ, որի կազմվելուն իրենց մասնակցությունն են բերել ոստիկանատան հայ ուրացող ծառայողները: 1915թ. ապրիլի 24-ին միաժամանակ ձերբակալվեցին և Պոլսի Մետերհանե կենտրոնական բանտ բերվեցին հայ մտավորականների առաջին

խումբը՝ շուրջ 230 հոգի: Այդ արյունոտ կիրակին հայ ժողովրդի պատմության մեջ մտավ որպես ամենասև տարեթիվ, համազգային սգի օր:

10.Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 265



Մեծ եղեռնի երրորդ և ամենաարյունոտ գործողությունը նահանգներում հայերի բռնի տեղահանությունն ու կոտորածն էր: Սոսկ այն փաստը, որ տեղահանությունը տարածվեց ամբողջ Թուրքիայի, այդ թվում նաև այնպիսի շրջանների հայության վրա, որոնք հարյուրավոր կիլոմետրերով հեռու էին ռազմական գործողությունների թատերաբեմից, լիովին մերկացնում է թուրքական այն կարծիքը, թե իբր տեղահանությունը կատարվել է ռազմա-ստրատեգիական անհրաժեշտությունից ելնելով: Հարց էր դրվում <<առավելագույն չափով օգտվել բացառիկ կացությունից>>, որ այդպիսի առիթ միշտ չէր ներկայանալու[11]:

Երիտթուրքերի կառավարությունը Թալեաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն հղեց վիլայեթների իշխանություններին, ուր ասվում էր, որ անհրաժեշտ է ոչնչացնել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությանը:<<Կառավարությունը,- նշվում էր կարգադրության մեջ,- իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին>>[12]:

Փաստորեն սա բնաջնջման հրահանգ էր: Հրահանգում տրվում էր կործանարար տեղահանության կազմակերպման մանրամասները.

1. Բոլոր հայերը պիտի մեկնեին. գյուղ առ գյուղ կամ թաղամաս առ թաղամաս՝ ոստիկան-զինվորների հսկողության տակ
2. Նրանց արգելվում էր հողերը և գույքը վաճառել կամ ուրիշի մոտ թողնել, այլ պիտի հանձնեին պետությանը, որովհետև հայերը տեղահանվում էին իբր

11. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 283 :

12 Հայ ժողովրդի պատմություն VI հատոր , Երևան , 1981թ., էջ 554-555:

ժամանակավորապես, և պատերազմից հետո վերադառնալով՝ հետ էին ստանալու իրենց ունեցվածքը:

3. Կապահովվի հայերի կյանքը
4. Ճանապարհին նրանց կտրվի անհրաժեշտ օգնություն
5. Չենթարկվողների և ոստիկան-զինվորների վրա զենք բարձրացնողների դեմ զենք կգործադրվի, իսկ փախուստի փորձ կատարողներն ու նրանց պատսպարողները կդատվեն պատերազմական ատյանով ու կգնդակահարվեն[13]:

Ամբողջ Թուրքիայով մեկ սկսվեց հայ բնակչության սիստեմատիկ ոչնչացումը, ըստ երևույթին, այն նպատակով, որպեսզի արմատից ոչնչացվեր հայկական հարցի ծագման հնարավորությունը[14]:

1915թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Ջեբել-Մուսայի, Ուրֆայի և Այնթափի հայերը: Ադրիանապոլսից հայերն աքսորվեցին հոկտեմբերին, Կեսարիայից՝ նոյեմբերին: Երկրի<<մաքրագործումը>> հայ ազգաբնակչությունից տևեց 1915թ. ապրիլից մինչև նոյեմբերը[15]:

Թուրքական իշխանություններն արյունոտ դատաստան տեսան ոչ միայն հայկական վիլայեթներում, այլև Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում ու

13.Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920թթ, էջ 67:

14. Խուրշուդյան Լ., Մելքոնյան Ա., Մկրտչյան Լ. և ուրիշներ, Հայոց ցեղասպանությունը , Երևան 2001թ. , էջ 300 :

15.Հայ ժողովրդի պատմություն VI հատոր , Երևան , 1981թ., էջ 555:

Թրակիայում բնակվող հայերի նկատմամբ: Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Զմյուռնիայից: Դա բացատրվում էր մի կողմից նրանով, որ այդ քաղաքներում էին գտնվում չեզոք տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներչը և թղթակիցներ, որոնք կտարածեին աշխարհով մեկ թուրք ջարդարարների ոճրագործությունները, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարությունը վախենում էր այդ քաղաքների տնտեսական կյանքի խափանումից, որտեղ հայերը վճռական դեր էին խաղում:



Այսպիսով, 1915-1918թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր աքսորվեցին, որոնցից մեկ ու կես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին,Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ երկու հարյուր հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ:

Այսպիսով՝ երիտթուրքերը գազանային եղանակով <<լուծեցին>> Հայկական հարցը: Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ <<Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր: Բնաջնջելով և տեղահան անելով արևմտահայությանը, երիտթուրքական

կառավարող շրջանները, իրենց կարծիքով, << վերացրին այդ խոչընդոտը>>, որը խանգարում էր իրենց պանթուրքական, զավթողական ծրագրերի իրականացմանը: Տրամաբանական ոչ մի կասկած չկա, որ ոճիրը ծրագրված ու

գործադրված էր քաղաքական պատճառներով: Առիթը ներկայացել էր թուրքական հողը ազատելու մի քրիստոնյա ցեղից, որը … աշխարհագրականորեն գտնվում էր թուրքական ու կովկասյան իսլամական ժողովուրդների միջև:Տեղի ունեցածը, հիրավի, նախադեպը չունեցող մի ոճրագործություն էր, որը կազմակերպեցին և առավել դաժանորեն իրագործեցին երիտթուրքական ջար-դարարները[16]:

1919թ. հուլիսին Կ.Պոլսի ռազմական տրիբունալը հեռակա կարգով մահվան դատապարտեց Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, կուսակցության գլխավոր քարտուղար Նազըմին՝ Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու և հայ ժողովրդի բռնագաղթն ու զանգվածային ջարդերը կազմակերպելու համար: Սա ըստ էության, Հայ դատի ճանաչումն էր պաշտոնական Թուրքիայի կողմից:

Այսպիսով թուրքերը չկարողացան կենսագործել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման հիմնական պայմանը, չվերացավ հայկական ՝սեպը՝, որը շարունակում է մնալ իբրև խոչընդոտ Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին : Մեր օրերում << Հայկական հարց>>-ը շարունակում է մնալ առկախված : Արյունարբու Աբդուլ Համիդ սուլթանին, երիտթուրք պարագլուխներին և աթաթուրք Քեմալին եկել է փոխարինելու նոր արյունարբու <<սուլթան Էրդողանը >> , որի համար << հայկական սեպ >> են Արցախն ու Զանգեզուրը :

Եվ քանի դեռ չի իրագործվել պանթուրքիզմի գաղափարախոսությունը, կա և գոյություն կունենա պանթուրքիզմը՝ իր վտանգներով: Սա անվիճելի իրողություն է:

Ուստի պետք է դասեր քաղել պատմությունից և ամուր կանգնել պետականության և անկախության դիրքերում :

16 http://armyansky.narod.ru/history/20-th-centuty-1915:

Փորձարարական դաս 1

Թեմայի ուսուցումը << Շրջված դասարան >> մեթոդով ՏՀՏ կիրառմամբ

Ուսուցչի ՝ Վարդուհի Հարությունյան
Դասարանը՝ 8-րդ դասարան
Ամիս-ամսաթիվ
Առարկան՝ Հայոց պատմություն
Դասարան ՝ 8-րդ
Դասի տևողությունը՝ 45 րոպե
Դասի թեման՝ << Հայոց Մեծ եղեռնը>>
Դասի տիպը ՝ << Շրջված դասարան >>
Դասի նպատակը .
Կրթական՝ սովորողը պետք է իմանա՝
. Հայոց Մեծ եղեռնը տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում
. Հայոց Մեծ եղեռնը իրագործվել է երեք խոշոր փուլերով
.Մեծ Եղեռնին զոհ դարձան Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 մլն հայերից 1,5 մլն հայ։
Խնդիրները՝
. **Կրթական՝** կարողանա վերլուծել երիտթուրքերի `հայերի ցեղասպանության ծրագիրը, դրա իրագործման քայլերի հաջորդականությունը , ցեղասպանության իրականացումն ու դրա հետևանքները ,գտնի նմանություններ և տարբերություններ համիդյան ջարդերի հետ , կատարի ընդհանրացում :
. **Զարգացնող՝**
զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը , վերլուծելու կարողությունը,ընդլայնել նրանց մտահորիզոնը, կենտրոնացնել ուշադրությունը :
· **Դաստիարակչական՝**
գիտակցի, որ երտթուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանությունը ոչ միայն համազգային , այլև համամարդկային ողբերգություն է ,արժևորի ցեղասպանության դատապարտման կարևորությունը և կարևորի ՄԱԿ-ի կողմիոց 1948թ. դեկտեմբերի 9-ի որշման դերը համայն մարդկության կյանքում :
Դասի ավարտին սովորողը պետք է՝
. **Իմանա՝**
հիմնական հասկացությունները, առանցքային գաղափարները, պատմական իրադարձությունները, ցեղասպանության ծրագիրը, գործիչներին :
. **Կարողանա՝**
բացատրել երիտթուրքերի եղեռնագործության պատճառները, վերլուծել ցեղասպանության ընթացքն ու հետևանքները :
. **Տիրապետի** ՝
1915թ. հայոց Մեծ Եղեռնի հիմնական դրվագներին **:**
. **Գիտակցի** ՝
հայոց Մեծ Եղեռնի դատապարտման դերն ու կարևորությունը համայն մարդկության կյանքում :
Ներառարկայական և միջառարկայական կապեր - << Հայոց պատմություն >> 8-րդ դասարան , <<Նոր դարեր>> 8-րդ դասարան , << Հայ գրականություն >> 8-րդ դասարան :

Ուսուցման մեթոդներ հնարներ – ԽԻԿ համակարգ , մտագրոհ, խմբավորում , Т-աձև, m-աձև աղյուսակներ, համառոտ դասախոսություն , զրույց , քննարկում :
Անհրաժեշտ սարքավորումներ համակարգիչ, պրոյեկտոր
ՈՒսումնադիտողական պարագաներ դասագիրք , պատմության տետր , բաշխիչ նյութ , նկարներ, քարտեզ , ՏՀՏ գործիքներ
Դասի ընթացքը՝
Հաշվառում ՝
Դասը կառուցվում է ԽԻԿ համակարգով
Դասի խթանում՝
Աաշակերտներին նախապես հանձարարվել էր տանը դիտել հետևյալ տեսնյութը
https://www.youtube.com/watch?v=OUpCfHvpats
<<Մտագրոհ>> մեթոդի կիրառմաբ ուսուչիչը գրատախտակին գրում է <<1915թ. ապրիլի 24 >> և աշակերտներին հարց է ուղղում , թե ինչ իրադարձությունների հիման վրա է ապրիլի 24-ը համարվում զոհերի հիշատակի օր : Սովորողները տանը նախօրոք դիտած տեսանյութից և բաշխիչ նյութերից ձեռք բերած գիտելիքներից տալիս են տարբեր պատասխաններ, որոնք գրառվում են գրատախտակին :Խթանման փուլում այս մեթոդի կիրառմամբ .

1915թ. ապրիլի 24

.Պարզվում է սովորողների գիտելիքների նախնական պատկերը նոր նյութի վերաբերյալ:
. Ակտիվանում է նրանց հետաքրքրությունը դասապրոցեսին :
.Սովորողների մեջ ձևավորվում է գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:
Դասի թեմայի մեկնաբանություն ՝
Այնուհետև ուսուցիչը հանդես է գալիս կարճ դասախոսությամբ ի մի բերելով <<մտագրոհ >>-ի արդյունքները՝ վերը նշված ռեսուրսների օգտագործմամբ /զուգահեռաբար պրոյեկտորով ցուցադրվում են եղեռնի տեսարաններ/:
ասի իմաստի ընկալում՝
Այս փուլում դասարանը բաժանում ենք 6-7 հոգանոց 4 խմբերի , որանց տրվում է ինքնուրույն աշխատանք նախապես բաժանված բաշխիչ նյութերով ՝ այսպես՝
1-ին խմբին հանձնարարվում է ներկայացնել հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը :
2-րդ խումբը m-աձև աղյուսակի օգնությամբ գրատախտակին կազմում է կայսրության բաժանումը 3 շրջանների / Արևմտյան Անատոլիա, Արևելյան Անատոլիա, Կիլիկիա և Սիրիա/ ըստ քարտեզի գրատախտակին նշվում են նաև Բոսֆորից մինչև Ալթայ Մեծ Թուրանի ճանապարհին <<կանգնած >> ժողովուրդները / հույներ, ասորիներ, արաբներ , հայեր..../
3-րդ խմբը ներկայացնում է 1915թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալված և խոշտանգումների ենթարկված 600 հայ մտավորականներին: Այս փուլում կիրառում է learningapps գործիքը :
https://learningapps.org/display?v=p8e5szmuj21
րդ խումբը ներկայացնում է ցեղասպանության հետևանքները :
Դասի կշռադատում՝

Կշռադատման փուլում, ուսուցիչը ի մի բերելով խմբերի կատարած աշխատանքները, համադասարանական քննարկումների արդյունքում ամփոփվում և ամբողջացնում է թեման՝ հանձնարարելով յուրաքանչյուր խմբին T –աձև աղյուսակով ներկայացնել .

ինչ գիտեին մինչև դասը սկսվելը	ինչ սովորեցին դասի ավարտին

Կշռադատման փուլի ավարտին կարելի է կիրառել նաև Quizizz գործիք՝ աշակերտների գիտելիքները ստուգելու համար.
https://quizizz.com/admin/quiz/6197fadc557e24001e9fccf1/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D6%80%D5%A4-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6
Տնային առաջադրանք՝ **Ուսուցիչը սովորողներին որպես տնային առաջադրանք հանձնարարում է ցեղասպանության նկատմամբ քաղաքակիրթ աշխարհի վերաբերմունքի, դատապարտման , ճանաչման և հետևանքների վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն, որը սովորողները կարող են ներկայացնել առցանց Linoit գործիքի միջոցով:**
Գնահատում՝ սովորողները գնահատվում են ըստ կատարած աշխատանքի , ակտիվության աստիճանի:

https://app.wisemapping.com/c/maps/1222817/edit

Վերլուծություն

Շրջված դասարանի մեթոդով և ՏՀՏ գործիքների կիրառմամաբ թեմայի ուսուցումը կազմակերպվեց 8-րդ դասարանում հայոց պատմության դասին: Դասարանում սովորում են 27 աշակերտներ : Մոդելի ընտրությոյնը հնարավորություն տվեց դասարանում ստեղծել ճկուն աշխատանքնային միջավայր , որտեղ տեղեկատվության հիմնական հաղորդողը աշակերտներն էին ի տարբերություն ավանդակա մոդելի : Այսպես, մեր դասընթացի նյութը նախապես փոխանցվել էր աշակերտներին տեսանյութի ձևով , ուստի վերջիններս իրենք են ընտրել ,թե երբ և որտեղ ծանոթանան նյութին , իսկ ինձ՝ ուսուցչիս, հնարավորություն տրվեց ժամանակ շահել և ամենատարբեր հմտությունների կիրառմամբ նպաստել դասընթացը հասկանալու գործին : ԽԻԿ համակարգը հնարավորություն տվեց դասի երեք փուլերում կիրառել տարբեր մեթոդներ ու հնարներ / մտագրոհ, խմբավորում , T-աձև, m-աձև աղյուսակներ, համառոտ դասախոսություն , զրույց , քննարկում և այլն / : Այս ամենը զուգորդվեց ՏՀՏ գործիքների կիրառմաբ /quizizz, learningapps, linoit և այլն/, ինչն ակնհայտ աշխույժություն, հետաքրքրություն առաջացրեց սովորողների շրջանում /որն , ի դեպ, հաճախ չենք կարող ասել ավանդական դասի համար /:

Փորձարարական դաս 2
Թեմայի ուսուցումը <<Խմբային աշխատանքի կամ համագործակցային ուսուցման>> միջոցով

Ուսուցչի `Վարդուհի Հարությունյան
Դասարանը՝ 8-րդ դասարան
Ամիս-ամսաթիվ-
Առարկան՝ Հայոց պատմություն
Դասի թեման՝ << Հայոց Մեծ եղեռնը>>
Դասի տևողությունը՝ 45 րոպե
Դասի տիպը `Նոր նյութի ուսումնասիրման
Դասի նպատակը
Կրթական՝ սովորողը պետք է իմանա՝
. Հայոց Մեծ եղեռնը տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում
. Հայոց Մեծ եղեռնը իրագործվել է երեք խոշոր փուլերով
.Մեծ Եղեռնին զոհ դարձան Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս նահանգներում ապրող ավելի քան 2,5 մլն հայերից 1,5 մլն հայ։
Խնդիրները՝
· **Կրթական՝**
կարողանա վերլուծել երիտթուրքերի `հայերի ցեղասպանության ծրագիրը, դրա իրագործման քայլերի հաջորդականությունը , ցեղասպանության իրականացումն ու դրա հետևանքները ,գտնի նմանություններ և տարբերություններ համիաղյան ջարդերի հետ , կատարի ընդհանրացում :
· **Զարգացնող՝**
Զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը,վերլուծելու կարողությունը , ընդլայնել նրանց մտահորիզոնը, կենտրոնացնել ուշադրությունը :
Դաստիարակչական՝
գիտակցի, որ երտթուրքերի կողմից կազմակերպված ցեղասպանությունը ոչ միայն համազգային , այլև համամարդկային ողբերգություն է ,արժևորի ցեղասպանության դատապարտման կարևորությունը և կարևորի ՄԱԿ-ի կողմիոց 1948թ. դեկտեմբերի 9-ի որշման դերը համայն մարդկության կյանքում:
Դասի ավարտին սովորողը պետք է՝
- **Իմանա՝** հիմնական հասկացությունները, առանցքային գաղափարները, պատմական իրադարձությունները, ցեղասպանության ծրագիրը, գործիչներին :
- **Կարողանա՝** բացատրել երիտթուրքերի եղեռնագործության պատճառները, վերլուծել ցեղասպանության ընթացքն ու հետևանքները :
- **Տիրապետի** `1915թ. հայոց Մեծ Եղեռնի հիմնական դրվագներին **:**
- **Գիտակցի** ` հայոց Մեծ Եղեռնի դատապարտման դերն ու կարևորությունը համայն մարդկության կյանքում :

Ներառարկայական և միջառարկայական կապեր - << Հայոց պատմություն >> 8-րդ դասարան , <<Նոր դարեր>> 8-րդ դասարան :
Ուսուցման մեթոդներ հնարներ – խոսքային , ցուցադրական , էվրիստիկ զրույց , քառաբաժան , հասկացությունների աղյուսակ :
ՈՒսուցման միջոցներ, ուսումնադիտողական պարագաներ դասագիրք , նկարներ, քարտեզ :

Դասի ընթացքը՝

Տնային հանձնարարության ստուգում ՝ նախորդ թեմայի բանավոր հարցում , գրատախտակին ժամանակագրական աղյուսակի կազմում :

Դասի խթանում՝ Հարցման մեթոդով ստուգել երեխաների գիտելիքները նոր թեմայի վերաբերյալ :

Դասի իմաստի ընկալում՝

դասարանը բաժանում ենք խմբերի ,որոնք ըստ ենթավերնագրերի ուսումնասիրեն նոր նյութը, ապա պատասխանում ուսուցչի կողմից առաջադրված մեկական հարցի :

ասի կշռադատում՝

Ելնելով պատասխաններից ՝խմբերին առաջարկվում է ներկայացնել իրենց ենթավերնագրերը ՝կիրառելով << քառաբաժան >> .

Ձեր տպավորությունները տեքստը կարդալիս	Տեքստը կարդալիս առաջացած զգացումները
Կարևորագույն 2 բառ բանալի /առանցքային հասկացություն, գաղափար/	Տեքստի համառոտ ներկայացումը սեփական բառերով :

Հարցերին պատասխանելու համար աշակերտներն աշխատում են խմբերով , ապա կազմակերպվում է համադասարանական քննարկում :Քննարկման արդյունքում գրատախտակին գրվում է օրվա դասի կարևորագույն հետևությունը

<< Ոչ ցեղասպանությանը >>

սովորողները ստացած նոր գիտելիքները կարողացան արտահայտել իրենց բառերով և կշռադատումներով :

Աշխատանքներն ամփոփելուց հետո կարելի է կատարվում է անդրադարձ և գնահատում :

Վերլուծություն

Երբ սովորեցնում ես , սովորում ես կրկնակի ...
Սենեկա

Խմբային աշխատանքը կամ համագործակցային ուսուցումը ամենից շատ օգտագործվողներից է , որը հաճախ եմ կիրառում պատմության դասերին : Այն թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին, համագործակցել միմյանց հետ , անկաշկանդ հայտնել տեսակետներ , արտահայտել սեփական հույզերն ու զգացողությունները,օգնել միմյանց , վեր հանել հետևություններ, իրարից սովորել : Փորձարկված դասի ժամանակ յուրաքանչյուր խումբ մյուս խմբին կարողացավ բացատրել իր կարդացած տեքստի բովանդակությունը, վերլուծեց , պատասխանեց նրանց հարցերին:Մեթոդի կիրառմամբ կարողացա ուղղորդել համագործակցող խմբերին , նրանց կարողացա կենտրոնացնել գլխավոր հիմնահարցերի շուրջ `տալով բանալի բառեր: Այս մեթոդը նպաստեց աշակերտների մոտիվացմանը, նրանց միջև առավել սերտ կապերի ձևավորմանը :

Եզրակացություն

<<Հայց մեծ եղեռնը>> հայ ժողովրդի պատմության ճակատագրական դրվագներից է , ուստի թեմայի արդյունավետ ուսուցումը մեծապես կախված է դաստիպի, դասավանդման մեթոդների ու հնարների ճիշտ ընտրությունից: Թեման փորձարկեցի 8-րդ ա և 8-րդ բ դասարաններում , առաջինի դեպքում օգտագործել եմ << Շրջված դասարան >> մոդելը ՝ ՏՀՏ-ի , մյուսում ՝ <<Խմբային աշխատանք կամ համագործակցային ուսուցում>> առանց ՏՀՏ գործիքների կիրառման : Փորձը ցույց տվեց ,որ << Շրջված դասարան >> մեթոդը ակտիվացրեց սովորողներին , նրանց դարձրեց առավել նախաձեռնող : Այս մոդելը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է դասարանի շրջումը: Մեթոդի կիրառման դեպքում աշակերտներից յուրաքանչյուրը իրեն կարծես <<զգում էր >> ուսուցչի դերում ,ապահովելով սովորողների առավելագույն ներգրավվածություն , իսկ ես՝ իբրև ուսուցիչ , գիտելիքներ փոխանցողի դերից ասանցել էի միջնորդի դերի: Փորձարարական երկրորդ դասի ժամանակ համագործակցային աշխատանքը մոտիվացրեց սովորողներին , նրանց դարձրեց ավելի համարձակ սեփական կարծիքների ու հույզերի արտահայտման գործում , նրանք դրսևորեցին պատասխանատու վարքագիծ խմբային աշխատանքում : Հարկ է նշել , որ թեմայի ուսուցման արդյունավետությունը երբեմն պայմանավորված է նաև դասարանի կազմի առանձնահատկություններով :Այսպիսով, կարող ենք փաստել, որ ուսուցման պրոցեսում զանազան մեթոդների և ՏՀՏ գործիքների կիրառումը մեծապես օգնում են ուսուցչին լուծելու իր առջև դրված խնդիրները նպատակին հասցնելու գործում :

Օգտագործված գրականության ցանկ

1. Խուրշուդյան Լ.,Հայոց ցեղասպանության պատճառներ և դասեր , մաս 1, Երևան , 1995:

2. Խուրշուդյան Լ., Մելքոնյան Ա., Մկրտչյան Լ. և ուրիշներ, Հայոց ցեղասպանությունը , Երևան 2001թ. :
3. Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին , Երևան 2003:
4. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը , Երևան , 1967:
5. Ղուկասյան Ա. , Հայոց պատմություն 8-9 ուսուցչի ձեռնարկ , Երևան Մանմառ, 2013թ:

6. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը ,Պատմա-բանասիրական հանդես N 1, Երևան 1995 :
7. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն , հատոր I, II,Երևան 2002:
8. ttps://elearning.iedf.am/my/
9. http://armyansky.narod.ru/history/20-th-centuty-1915:
10. https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=30724
11. https://elearning.iedf.am/mod/page/view.php?id=30729